2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքի N2 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչի աշխատանքային հաշվետվություն

Ուսուցիչ՝ Ս.Մելիքսեթյան

- Առաջնորդվելով ԿԳՍՄՆ նախարարության հաստատած չափորոշչային պահանջներով, ստեղծել եմ տարեկան թեմատիկ պլան և ներկայացրել հաստատման:
- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծել եմ բարենպաստ պայմաններ ,միջավայր,համապատասխան կահավորում:
- Ամրացնել եմ փոխհամագործակցությունը և փոխօգնությունը:
- Աշակերտների մեջ խորացրել եմ սերը ուսման,հայրենիքի,դպրոցի նկատմամբ:Սերմանել եմ աշխատասիրություն,պարտաճանաչություն,և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և

հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:

- Սովորեցրել եմ գնահատել սեփական արարքները,նկատել իրենց և ընկերների թերությունները,ժամանակին շտկել դրանք:
- Դաստիարակել եմ հարգանք մեծերի նկատմամբ,ուշադրություն՝ փոքրերի:
- Կարևորել եմ անձնական հիգիենան և մաքրասիրությունը:

▪Ձևավորել եմ բարոյական արժեքներ, որոնք պետք է դառնան աշակերտների հասունության և վարքի հիմքը: Օրինակ եմ բերել տարբեր սերունդների բարոյական փորձը, ուսումնասիրել ենք հանճարների կյանքը, գաղափարները իրականացրել ենք սեփական արարքների քննադատական վերլուծություն ու գնահատում հարցաթերթիկների , թեստերի միջոցով:

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

▪Առաջնորդվելով չափորոշչային տվյալներով՝ կազմել եմ թեմատիկ և գործնական գրավոր աշխատանքներ:

▪Աշակերտներին նախապատրաստել եմ անհրաժեշտության դեպքում խմբերով կամ հեռավար ուսուցման:

- Կանոնավոր հետևել եմ աշակերտների առաջադիմությանը <<Մայրենի>>,<<Հայոց լեզու >>և <<Գրականություն>>առարկաներից՝ հնարավորինս բարձրացնելով ուսման որակը:
- Խստորեն հսկել եմ տնային հանձնարարությունների կատարմանը,վարքին:
- Ապահովել եմ աշակերտ- ուսուցիչ – ծնող կապը:
  - Պարբերաբար հավաքել և ստուգել եմ աշխատանքային տետրերը:
- Քաջալերել եմ աշակերտներին , խրախուսել նրանց ձեռքբերումները և շտկել բացթողումները:
- Կազմակերպել ինքնազարգացման գործնական աշխատանքներ:
- Դասարանում ապահովել խաղաղ, դրական միջավայր:
  - Զնավորել հայրենասեր,ազգանվեր,կրթված,ընկերասեր,անձնազոհ անհատներ՝ պատրաստ հաղթահարելու բոլոր խոչընդոտները և առաջ շարժվելու:

2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն

2022-2023 ուստարվա համար ստեղծվել և հաստատման եմ ներկայացվել տարեկան թեմատիկ ծրագիրը:
Կազմել եմ թեմատիկ գրավոր աշխատանքներ <<Մայրենի>>,<<Հայոց լեզու>>,<<Գրականություն>> առարկաներից:
Առաջին և երկրորդ կիսամյակներում կազմվել և տրվել են նաև գործնական աշխատանքներ:Բոլոր աշխատանքները ստուգվել և արխիվացվել են:
Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 5-րդ <<բ>>, 6-րդ <<ա>>,7-րդ<<բ>>,8-րդ<<ա>>,9-րդ<<ա>> դասարանների մի շարք բազմաշնորհ աշակերտներ մասնակցեցին <<Երեք սրբության զավակներ>> առցանց նախաձեռնությանը և ստացան հավաստագրեր:
Մասնակցեցին<<Մեղու՝ հայերենը բոլորի համար>> մրցույթը,որն այս տարի ևս անցկացվում էր հեռավար:
Դեկտեմբերին 8-րդ <<ա>> դասարանում կազմակերպվեց բաց դաս<<Պետրոս Դուրյան >>թեմայի ամփոփում :
Փետրվարին՝ Մայրենիի օրվան ընդառաջ,կազմակերպվեց <<Բարբառը բոլորի համար>> տեսանյութերի մրցույթը(որտեղ մեր սաները հայտնվեցին լավագույն տասնյակում) և <<Եթե ես լինեի սուպեր հերոս>> շարադրությունների մրցույթը և

պաստառների ձևավորման մրցույթը:Աշակերտները մեծ ոգևորությամբ մասնակցեցին բոլոր մրցույթներին:
Ամեն ամիս արվել են համակարգչային դասեր:
Աշխատանք եմ տարել ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ:
Պատրաստել եմ հետևյալ զեկույցները՝
ա/ Ավետիք Իսահակյան <<Հավերժական սերը>> թեմայի ուսուցումը
բ/ Պրոբլեմային ուսուցում
Կատարվել են փոխադարձ դասալսումներ:
120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտի քննություն:
Բոլոր դասարաններում կատարվել են ծրագրերը: